

Նա, որ իւր քաղցր լուծով մեզ կրկին անգամ դէպի ցանկալի հանդիսար վերադարձնել կարող է՝ սփռփել և հանդուցանել: Նորա՝ մեր Փրկչի՝ մեր Հանգուցչի՝ զիրկը՝ զիմենք ամեն անգամ, երբ տաղնապի և անձկութեան մէջ ենք: Եթէ ամէնքը մեզ խարն և լքանեն, եթէ երկրագունդն իսկ սաշի մեր ոտքի տակից՝ Նա անուտ է, Նա հաստատուն և Նա կանչում է մեզ. «եկայք ... եկայք առիս ...»:



Ս. ՆԵՐՍԷՍ ԸՆՈՐՀԱԼԻ

և

ՆՈՐԱ

«ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻՒՆՔԵՆ ԵՂԵՐԵՐԿՈՒԹԻՒՆԸ»:

Ներսէս, որ Շնորհալի է կոչուել զեղեցիկ խօսելուն և կայեցի՝ Հռոմկայ դղեակը աթոռանիստ ունենալուն համար, Ապիրատ անունով հայ իշխանի կրտսեր որդին էր՝ 1102 թ.-ին ծնուած: Մօր կողմից նա սերունդ էր Հայոց բարձր ազնուականութեան ամենանշանաւոր տոհմի՝ Պաշլաւունեաց իշխանական տան՝ որ իւր ծագումը հասցնում էր մինչև Արշակունեաց հին արքայական տունը և ս. Գրիգոր Լուսաւորչին ևս իւր հայրերի ցանկի մէջ հաշուում: Ներսէսի անմիջական նախնեաց օրով ամենից աչքի ընկնող ներկայացուցիչն այդ տոհմի էր Գրիգոր Մաղխարոս, որ հաշակուած էր թէ՛ իրրե պետական անձն և թէ՛ իրրե մասնագիր: Նա մեռաւ 1058 թ.-ին, երբ Միջագետքի կառավարչապետն էր՝ Յունաց կողմից կարգուած: Բացի շատ աղջիկներից նա թողեց նաև 4 որդի, որոնցից մեծը՝ Վահրամ 1065 թ.-ին կաթողիկոսանալով՝ Գրիգոր Բ. անունով ս. Լուսաւորչի աթոռը բարձրացաւ, որի վերայ մնաց մինչև 1105 թ.-ը՝ իւր մահը: Սա առանձին օէր ունէր վկայարանութիւնների համար, ինքը բազմաթիւ վկայարանութիւններ յունարէնից և ասորերէնից հայերէն է թարգմանել և առ հասարակ ամեն կերպ նպատակ է վարուց սրբոց զբանուութեան ծաղկելուն իւր աթոռի շուրջը. այդ

պատճառով և Վկայասէր պատուանունն է ստացել: Նորա քոյրերից կամ Գրիգոր Մաղխարոսի աղջիկներից մէկը, որի անունը ինչպէս և իւր ամուսնունը՝ պատմութեան մէջ չէ պահուած՝ Ապիրատ իշխանի՝ Ներսէսի հօր, մայրն էր: Անձանօթ է նոյնպէս Ներսէսի մօր անունը:

Ապիրատ ունէր 4 որդի՝ Բարսեղ, Շահան, Գրիգոր և Ներսէս: Երկու կրտսերները՝ Գրիգոր և Ներսէս, եկեղեցական կոչման էին նուիրուած և դորա համապատասխան կրթութիւն էին ստանում իրենց մեծ-մօրեղբոր՝ Գրիգոր Բ. կաթողիկոսի ձեռքի տակ: Մահուան անկողնում Գրիգոր Բ. յանձնեց երկու մանուկների կրթութեան հոգսը, զեռ կենդանութեան ժամանակ իրեն յաջօրք կարգուած: Բարսեղին, որ նոյնպէս ազգակից էր Պաշլաւունիների իշխանական տան՝ լինելով Վկայասիրի կրտսեր քրոջ որդին, Բարսեղը իշխանագունների դաստիարակիչ նշանակեց Կարմիր վանքի հռչակաւոր Ստեփաննոս վարդապետին: Ինքը Բարսեղ կաթողիկոսը վախճանուեցաւ 1113 թ.-ին և նորա յաջօրքն եղաւ աւագագոյնը երկու եղբայրներից՝ Գրիգոր: Նա իշխանութիւն վարեց Գրիգոր Գ. անունով 1113 թ. ից մինչև 1166 թ.-ը: Կաթողիկոս լինելուց մի քանի տարի յետոյ Գրիգոր իւր կրտսեր եղբայր Ներսէսին քահանայ ձեռնադրեց: Չեռնադրութեան տարին դժուար է հաստատուն կերպով որոշել, բայց յամենայն դէպս 1121 թ.-ին Ներսէս արդէն քահանայ էր, որովհետև իւր առաջին բանաստեղծական երկի մէջ, որ այդ թուականից է, նա իրեն իրրե քահանայ է ներկայացնում: * Աւելի դժուար է այն տարին որոշել, երբ Ներսէս եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: ** Հաստատ է միայն, որ 1139 թ.-ին նա ունէր արդէն եպիսկոպոսական աստիճան, որովհետև այդ տարին նա իրրե եպիսկոպոս իւր կաթողիկոս եղբոր շքախմբի մէջ էր՝ Անտիօքի լատինական ժողովում: ***

* Տես Հ. Դ. Այիշան. — Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ 1873, եր. 58.
 ** Նոյն եր. 109.
 *** Նոյն եր. 148.

Նպիսկոպոս ձեռնադրուելու օրից Ներսէս Գրիգոր Գ.-ի հաւատարիմ գործակիցն էր կաթուղիկոսական վարչութեան մէջ՝ միաժամանակ անգաղար գրական աշխատութիւններով գրադաճ։ Նորա անխնջ գործունէութիւնը մի ընդմիջում միայն ունեցաւ 1153 կամ 1154 թ.-ին, երբ նա ծանր հիւանդացաւ և ինչպէս ինքը իւր Ազիրաւ եղբորորդուն զըրած մի նամակի մէջ ասում է, մահուան դուռն էր հասել։

1166 թ.-ին Գրիգոր կաթուղիկոսը, մահուան մերձաւորութիւնը զգալով, մի ժողով գումարեց իւր կաթուղիկոսանիստ Հռովմէացուն՝ և յայանեց այդտեղ իւր զիտաւորութիւնը՝ Ներսէսին իւր տեղ կաթուղիկոս կարգել։ Ներսէս, ինքն արդէն 65 տարեկան, հրաժարուեցաւ այդ բարձր կոչումն ստանձնելուց՝ ինչպէս և առաջ հակառակել էր եղբոր առանձնակի ստիպումներին։ Սակայն վերջապէս պէտք է տեղի տար նա եղբոր և ժողովուած եպիսկոպոսների խնդրանաց առաջ, և այդպէս Գրիգոր նորան կաթուղիկոս ձեռնադրեց և ինքն առաջինը ժողովականների մէջ խոնարհութիւն մատոյց նորան՝ իբրև Հայոց եկեղեցւոյ նոր հովուապետի։ 1166 թ.-ի ապրիլ 17-ին էր այդ։ Նրեք ամիս անց վախճանուեցաւ հրաժարած Գրիգոր կաթուղիկոսը և Ներսէս, իբրև Ներսէս Գ. կաթուղիկոս, անմիջապէս եղբոր մահից յետոյ մի հիանալի ընդհանրական ուղղեց ամբողջ Հայոց եկեղեցուն, որ փառաւոր վկայութիւն է այդ մեծ մարդուն ինչպէս հովուական լուսամիտ եռանդի այնպէս և խոնարհ հոգու համար։ * Նորա նայրապետական գործունէութեան մէջ առանձնապէս մեծ տեղ են ընկում՝ Յունաց եկեղեցւոյ հետ միութեան խնդրի առթիւ ունեցած աշխատութիւնները։¹ Ենորճալին վախճանուեցաւ

* Այս հովուական բուրքը ժամանակակից Հայոց եկեղեցւոյ մէջ սիրող կրօնքեան և բարեի պատմութեան համար մեծ նշանակութիւն կ'ունենայ, որովհետև Ներսէս և նոր գոյաւորութեան շոյափում է զանազան դասակարգերի կենցաղաբարեկեցական մանրամասնութիւնները։

¹ Յարգելի Պրոքեստոր այս խնդրի վերայ նայում է հարկաւ կարողական ձեւակիսով. ուստի և նորա ասածները բաց ենք թողնում։

1173 թ.-ի օգոստոս 8-ին, 71 տարեկան հասկում։

Ներսէս Գ. խիստ ընդարձակ գրական գործունէութիւն է ունեցել՝ աստուածաբանութեան ամեն տեսակ ճիւղերի, ամէնից աւելի Հայոց եկեղեցւոյ դաւանութեան և կարգերի, բայց նաև վիլիսոփայութեան, մեկնաբանութեան, ճգնական կեանքի վերաբերեալ։ Մեզ հասել են նոյնպէս նորա մի քանի քարոզները։ Մեզ այստեղ գրադեցնողը սակայն նորա բանաստեղծական գրուածներն են։ Այդպիսիներից պահուած կան բազմաթիւ փոքր կրտորներ, մասամբ խրատական, մասամբ քնարական բնաւորութիւն ունեցող, այլ և մի քանի նամակներ չափով գրած։ Ներսէս սիրում է գործ դնել այս փոքր բանաստեղծութեանց մէջ այբուբենական և նշանակաւոր սկզբնատառերի ձևեր, մանաւանդ վերջինս։ Բազմաթիւ երգերի մէջ աների սկզբնատառերը կազմում են Ներսէս անունը և յարաբերեալ խօսքեր։ Բանաստեղծի սիրած այս սովորութիւնը, որ ս. Նիքիթմ և ս. ունեցել է, և ինչ այբուբենական ձևին է վերաբերում՝ արդէն մի քանի սաղմոսների հեղինակներ գործ են զրելը պէտք չէ մեր այժմեան ճաշակով քննադատուի այլ հին արեւելքի ճաշակով, այն ինչ որ մեզ համար արուեստական է, այդտեղ իբրև զուր բանաստեղծական զեղեցկութիւն էր ընդունուում։ Ներսէս Գ.-ի բոլոր փոքր բանաստեղծութիւնները (սակայն ոչ լրիւ) հրատարակուած են միատեղ վեհափոխում 1830 թ.։

Բացի այդ փոքր տաղերից Ենորճալին թողել է 5 մեծ բանաստեղծական երկեր։

Ա. Մի վիպասանութիւն, որ ներկայացնում է Հայաստանի պատմութիւնը մինչև իւր ժամանակը։ Այդ 1600 տող բովանդակող գրուածքը բանաստեղծի առաջին երկասիրութիւնն էր, որ նա հրատարակեց 1121 թ.-ին, 20 տարեկան հասկում։

Բ. Ողբ Եղեւսիոյ։ 1144 թ.-ին քրիստոնէից Նիքիթա քաղաքը Հայկալի Լիմոզեղիին Չինգի Սուլթանի ձեռքով առնուեցաւ, և մի կամ երկու տարի յետոյ, 1145 կամ 1146 թ.-ին Ներսէս գրեց իւր ողբը։

Գ. Մի խրատական գրուածք հաւատոյ

բովանդակութեան վերաբերեալ՝ «Բան հաւատոյ» վերնագրով, մօտ 1500 տող:

Գ. «Ներքող ի կենսատու ս. Մաշն» մօտ 600 տող:

Ե. «Յիսուս Որդի» եղերերգութիւնը, որ այգպէս է կոչուում սովորաբար՝ սոյն երկու բառերով սկսուելուն համար: Իւր այս գլխաւոր երկասիրութիւնը Ներսէս զրեւ է, ինչպէս ինքը վերջարանի մէջ յայտնում է: 1152 թ.-ին ուրեմն 50 կամ 51 տարեկան հասակում: * Հայոց մէջ «Յիսուս Որդի» բանաստեղծութիւնը խկզբանէ անտի ամենամեծ հեղինակութիւն է վայելել: ** Այդպիսի գնահատութեան կենդանի ապացոյց են հայերէն բնագրի բազմաթիւ հրատարակութիւնները: Այդ գրուածքը տպագրուել է 1565, 1643 և 1660 թ.-երին Վենետիկում: սոյն 1660 թ.-ին Ամստերդամում: 1702-ին Մարսէլում: 1724 և 1746 թ.-ներին Կ. Պոլսում: 1785-ին Պետերբուրգում: 1792 - ին Մադրասում: 1830-ին կրկին Վենետիկում (յիշեալ ընդհանուր գործոց ժողովածուի մէջ): Հայերի կարծիքին համապատասխան են մի քանի եւրոպացի հայագէտների կարծիքները: Այդպէս Նեւմանն անուանում է Յիսուս Որդի բանաստեղծութիւնը օրինակելի իւր տեսակի մէջ, և նորանից շատ առաջ Ֆրանսիացի հայագէտ Յակոբ Վիոլէտտը (1656—1743), իւր 1713 թ.-ին հրատարակած բառին—հայերէն բազբի մէջ, մինչև իսկ իրրև մի «Ճշմարտապէս ասուածային գիրք» է հռչակում այն:

Ես հարկաւ այդ կարծիքին համաձայնել չեմ կարող, որովհետև նոյն բանաստեղծութիւնը անուրանալի պակասութիւններ ևս ունի, արեւմտեան մարդու զգացման նա շատ յեղ արուեստական է զայիս, այլ և երկրորդ երգի մէջ պակաս է նիւթի կանոնաւոր գասաւորութիւն: Ապա պէտք է հաշուի առնել,

որ այս գործի գեղեցկութիւնը առաւելագէս այն ճարտարութեան վերայ է հիմնուած, որով զիտէ Ներսէս հայոց լեզուն զործածել. նորա բանաստեղծութեան մէջ հայերէնը իրօք ներգաշնակ հնչումն է ընդունում: Ներկայ եղերերգութիւնը բնական և ուղիղ կերպով գնահատելու համար անհրաժեշտ է այդ պատճառաւ բնագրի լեզուին ծանօթ լինել: Հէնց որ այդ ճարտար գործը մի օտար լեզուով թարգմանուում է, մանաւանդ մեր ժամանակակից եւրոպական մի լեզուով, որ կտրուկ և ճիշդ արտայայտութեան, ինչպէս և ձևերի հարստութեան կողմից, հայերէն գրաբարի հետ երբէք մրցել չի կարող՝ բնագրի թարգմանաւորութիւնը կորչում է: Սակայն օտար զգեստի մէջ ևս, ուր միայն բովանդակութիւնը կռապատել կարելի է, հայ եպիսոպոսի ս. Դրբով ներշնչուած եղերերգութիւնը իրրև մի իսկական և ճշմարիտ բանաստեղծի գործ է ներկայանում: Ինքնուրոյն է ամբողջի ղեկավարող գաղափարը, զարմանալի բանաստեղծի ընդունակութիւնը՝ միշտ նորանոր զարձուածներով միևնոյն հիմնական միտքը արտայայտել, ապաշխարութեան գաղափարը՝ առանց կրկնութիւնների մէջ մտնելու. իսկ լեզուն, թէև երբեմնակի արեւելեան ճապաղ ձև է ընդունում՝ յիշեցնում է այնուամենայնիւ շատ տեղեր, իւր համարձակ և զօրեղ պատկերացումներով՝ Հին Կտակարանի մարգարէների արտայայտութեան եղանակը:

Բանաստեղծի ըմբռնմամբ այս երկասիրութիւնը Հին և Նոր կտակարանի սրբազան պատմութեան գլխաւոր դէպքերը շօշափող, չափի վերածած մի ապաշխարութեան աղօթք է, որ խօսողը քրիստոնէութեան անունով արասանում է: Թէ այդ պէտք է լինի զբուածքի առաջնորդող գաղափարը՝ հեռուում է ակնյայտնի կերպով վերջարանից, որի մէջ Ներսէս իւր բանաստեղծութիւնը «բան աղօթից» է անուանում, որ նա ընդհանրութեան անունով արաբերել է՝ «ընդհանրութեան խօսքը և գործը իւր անձի վերայ փոխադրելով» և «խօսքն անմիջապէս դէպի Աստուած ուղղելով»: Բոլոր քրիստոնէութեան անունից ուրեմն բանաստեղծը խոստովանանք է գնում Բրիտանի, Հօր Միածին Որդու,

* Կարելի է սակայն ենթադրել, որ նա վերջերս կարողիկոս լինելուց յետոյ, այդ բանաստեղծութիւնը քերական փոփոխութիւններով երկրորդ անգամ երաստակել է որովհետև վերջարանի 69 և 70 տողերի նման 2 տարբեր ընթերցումներ կան որոնցից մեկը բանաստեղծին ստղեն իրրև կարողիկոս ներկայացնելի է նարկարում:

** Այլուան Միլսոնի «Գրասխ Կորուսեալի» կողմից է գնում այն:

Աշխարհի Փրկչի առաջ: Իւր խոստովանութեան շարայարութիւնն առնում է նա Հին և Նոր Կտակարանի սուրբ պատմութիւնից, առաջին երգի մէջ նա ընթերցողի առջևից անց է կացնում Հին ուխտի բոլոր այն ներկայացուցիչներին, որոնք բարի կամ չար գործերով աչքի են ընկել և մէջընդմէջ համեմատում է իւր սեփական հոգու վիճակը այդ անձնաւորութեանց ունեցածի հետ: Երկրորդ երգի մէջ բանաստեղծը աւետարաններում պատմած Տիրոջ հրաշքները և աւելի Յիսուսի քարոզութեանց՝ յատկապէս առաիններին մէջ եղած բարոյական խրատները իւր վրայ է դարձնում կրկին քրիստոնէական զաղափարատիպի և իւր սեփական վարքի մէջ եղած մեծ հակադրութիւնը ողբալու համար: Երրորդ երգի մէջ, որի հատուած առ հատուած գաստորութեան համար բանաստեղծը ինչպէս յայտնի երևում է, ամենամեծ խնամքն է գործ գրել՝ նկարագրում է կարգով Փրկչի շարչարանքը՝ յարութիւնը և համբարձումը: ս. Հոգւոյ դալուստը, այդ խորհուրդներից իւրաքանչիւրի իւր առանձնայատուկ կողմերով քրիստոնէից մեղքերի հետ ունեցած աւերելութիւնն է պարզաբանում, ապա սուրբերի բարեխօսութեանն է ապաւինում՝ թուելով նոցա դաս առ դաս: Աւելի կանգ է առնում Ներսէս այն հակադրութիւնը նկարագրելիս, որ նահատակների, ձգնաւորների և շարչարանաց ու աղաշխարութեան գործերի՝ և խօսողի սեփական մեղատմած ու հեշտ կեանքի մէջ կայ: Ապա խօսքը գալիս է վերջին դատաստանին՝ որի պերճ գծագրութիւնը մի արդարեւ սքանչելի պատկեր է ընծայում: մի առ մի յառաջ են բերուած այստեղ դատաստանի յառաջընթաց երևոյթները, Դատաւորի յայտնուիլը, շարերի մերժումն ըստ իւրաքանչիւր կարգի բարիների երանութեան հասնելը՝ կրկին համաձայն իրենց աստիճանների և վերջապէս բանաստեղծի ազաչանքը՝ դատաստանի միջոցին աջակողման գաստուն սրժանանայ: Այդ ազաչանքը Ներսէս անում է իւր իւրայինների բարեկամների և թշնամիների ի վերջոյ այն բարեպաշտ ընթերցողների անունից, որոնք իւր գրուածքը կկարգանէ վերջարանի մէջ նա բացատրում

է իւր բանաստեղծութեան միտքն ու նպատակը և աշխատում է այն թիւրիմացութիւնների առաջն առնել, որ իւր շարագրած աղօթքը արտաքին ձևով պատճառել կարող էր:

Թէ արդեօք ամբողջ գրուածքը երեք երգերի բաժանելը բանաստեղծից իրենից է սկիզբ առնում՝ կասկածելի է, որովհետեւ բոլոր ձեռագիրների մէջ այդ բաժանումը չէ պահպանուած: Եւ ամենայն դէպս եղերերգութեան ծրագրին համապատասխան է այն և հիմնուած նորա բովանդակութեան վերայ:

Չափի նկատմամբ այս երկասիրութիւնը բաղկացած է 4000 տողից, որոնցից իւրաքանչիւրը 8 վանդ ունի և չորրորդ կամ հինգերորդ վանդից յետոյ մի հատած: Հատածի կարևորութիւնը ամենայն խստութեամբ պահպանուած է, և ոչ մի տողի մէջ պակաս չէ այն: Հին հայկական բանաստեղծութիւնը վանդերի քանակութիւնը փոփոխել չգիտէ, իսկ չափը սկզբից մինչև վերջ իսմը է,՝ հետեանք հին հայկական շեշտագրութեան, որով բառերի ամենամեծ մասը վերջին վանդի վերայ շեշտ ունի . . . :


Ներսէս ինքը կամեցել է երկու տողը իրբև մի բանաստեղծական տող հաշուել. այդ երևում է վերջարանից, ուր նա 2000 տող է թուում . . . : Մեր եղերերգութիւնը արտաքին կազմակերպութեամբ մի անօրինակ կողմ ևս ունի. բոլոր 4000 տողերն այստեղ վերջանում են նոյն «ին» յանգով: Միայն վերջարանի մէջ յանգը փոխուում է, 48 տող «ան» յանգով են վերջանում, ապա կրկին 48 տող «այ» յանգով և վերջապէս 64 տող «ի» վերջոյանգով: Եւսեղաւորութեան այսպիսի միակերպութիւն հայերէն զրարարի մէջ կարելի է լինում՝ զխաւորապէս յիշած շեշտագրութեան պատճառով. ուրիշ ամեն մի լեզուի համար, ուր շեշտը փոխուում է, բացարձակապէս անընդունելի է այն:

Անա այսպիսի ներածութիւնից յետոյ յայտնի հայազէտ ուսուցչապետ Պ. Փետտէր

1 կարճ եւ երկար, կարճ եւ երկար՝ — — (Յիսուս—Որդի):

Tübinger quartalschrift թերթի ներկայ թուականի Բ. համարում յստաջ է ընդունում Ծնորհալու «Յիսուս Որդի երկասիրութեան առաջին անգամ» փոխադրութիւնը մի օտար՝ գերմաներէն լեզուով, ո՛չ ամբողջական թարգմանութիւն, այլ կարեւորագոյն հատուածները միայն: մէջ ընդ մէջ մնացածի համառոտ բովանդակութիւնը պատմելով: Մի տարի առաջ Պատուարժան ուսուցչապետը մեզ նամակով խոստացել էր մի աշխատութիւն ուղարկել Արարածի համար նոյն այդ երկասիրութեան մասին: այժմ՝ կողմնակի կերպով կատարում է իւր խոստումը՝ շտապելով ուղարկել յիշեալ յօդուածը, դեռ ամբողջ թերթը լոյս չտեսած: Մենք անտեղի չհամարեցինք ամբողջ ներածութիւնը հայերէն փոխադրել: մտածելով որ Ծնորհալի մեծ հայրապետի կեանքն ու գործերը շատ աւելի մօտ ծանօթ չեն լինի մեր ընթերցողներին, քան օտար գերմանացիներին:

Աւելորդ չենք համարում յիշել այստեղ նաեւ, որ ինչպէս Յարգելի ուսուցչապետը մասնաւոր նամակով յայտնում է լոյս է տեսել արդէն Պրոֆ. Հիւրշմաննի Հայոց լեզուի քերականութեան Բ. մասը — «մի հիանալի գործ», որով հայերը պարծենալ կարող են, որովհետեւ այնպէս հիմնաւոր կերպով ինչպէս այստեղ Հիւրշմանն հայերէնն է ուսումնասիրել՝ դեռ ոչ մի արեւելեան լեզու, ո՛չ իսկ սանսկրիտը, ուսումնասիրուած չէ:



ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

ՓՈՒՍԳՐԵԱԼ Ի ԽԱՂԱՍ ԵՐՈՊԱԿԱՆՍ ԵՒ ՆԵՐԳԱՇՆԱԿԵԱԼ Ի ԶԵՌԵ Մ. ԵԿՄԱԼԵԱՆ. ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԳԵԱՄԲԵՊ. Գ. ԳՐ. ՄԵՂՈՒՐԵԱՆ. ԼԷՅՊՅԻԳ—ԲՐԷՏՏԱՊՅ ԵՒ ՀԷՐՏԷԼ. ՎԻԵՆԱ—ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ. 1896.

Ներածութիւն.— Բանականի դրոշմիւն — Փոխադրութիւն և փոփոխութիւն: — Տաղաւափութիւն և շեշտադրութիւն: — Զայնաւորութիւն և անդաշնակութիւն: — Գասաւորութիւն և կապակցութիւն: — Պակասոց և սպագրութիւն: — Եզրակացութիւն:

Վերջապէս լոյս տեսաւ Յարգելի երաժիշտ պ. Մակար Եկմալեանի այս մեծածաւալ գործը, ներդաշնակած է երեք տեսակ. ա. եռաձայն, բ. քա-

ռաձայն և գ. քառաձայն. ա. և բ. արական, իսկ գ. խառն խմբի համար:

Յառաջարանում կարգում ենք, թէ և գիտեինք, որ բաղմաձայն երաժշտութիւնը հակառակ չէ մեր եկեղեցու ոգուն, այլ նորա կատարելութիւնն ու լրումն է և մեր նախնիքն էլ իւրաքանչիւր դարու գեղարուեստի զարգացման համեմատ յօրինեցին մեր եկեղեցական երգերը — բայց մենք ներդաշնակելիս շատ զգուշացանք և երկիւղածութեամբ վերարեբեցանք, որովհետև անշուշտ պէտք էր անայլայլակ փոխադրել (բացի «Հայր մեր»-ից՝ եր. 74. և 210 և «Գոհանմք»-ից՝ եր. 168), որոնք տպագրած մատենի մէջ չկան. առաջինը կազմեցինք հայրապետական մաղթանք «Հայր մեր»-ի համաձայն, որպէս երգում են Ս. Էջմիածնում, իսկ երկրորդը հին եզանակի համեմատ) մայր եղանակները, որպէս տպած են Ս. Էջմիածնում, երրորդական չափերի և խաղերի, իսկ ներդաշնակութիւնն այնպէս յօրինել, որ մեր եկեղեցական երգեցողութեանց ոգուն համաձայն պարզ, վայելուչ լինի, Աւստի խորշեցինք էլ և Էջից գուրս կիսաձայններ գործածելուց (chromatisme) և եղանակի գաւառադրութիւնից (modulation), այլ ջանացինք մնալ եզանակի նոյն երեւոյցի մէջ (diatonisme) և ներդաշնակութիւնն էլ կարելի եղածի չափ պարզ յօրինել, որովհետև այսպէս է պահանջում պարսիկ-արաբացի երաժշտիկան ոգին, որի մի մասն է և մերս:

Ծրագրին համաձայն ենք, բացի ընդգծածներէց:

Մեր եկեղեցական եղանակները ո՛չ մէկն էլ կրեւի լռելին, այլ կարճով են փոխակերպ դրոշմաւոր: Բացատրենք:

Յայտնի է, որ բոլոր ազգերն էլ նախ երգեցին, ապա նուագեցին. առաջ երգեցողութիւնը, յետոյ նուագածութիւնն առաջ եկաւ. առաջ կարողացան ձայնաստիճանը որոշել, զանազանել, ապա նուագարանի վերայ հաստատեցին, Յայտնի է նոյնպէս, որ Յունաց սկզբնական նուագարանը քառալար քնարն էր (Lira). լարում էին աստիճանաբար և այսպէս. Ա և Բ լարի ձայնամիջոցն էր կէտ, Բ—Գ և Գ—Դ—ինը մի մի ամբողջ ձայն. ուրեմն

Ա $\widehat{1/2}$ Բ $\widehat{1}$ Գ $\widehat{1}$ Դ. այս ձայների յաջորդութիւնը նորա քառալար (Թեթրաքորդոս) էին կոչում: Ահա այս գործիքի վերայ էր նուագում Արփեսուր և որպէս Սեր նախնիքն էլ գրում են. «Մինչև ի քարանց անգամ զգալ զխրատաղմունս ձայնից ամենայն կենդանեաց», Ժամանակի ընթացքում աւելացաւ մի երկրորդ քառալար, բայց այնպէս, որ առաջին վերջին լարը՝ Դ-ն միանգամայն իրրև Ա լար էր երկրորդի համար, ուրեմն այսպէս. Ա $\widehat{1/2}$ Բ $\widehat{1}$ Գ $\widehat{1}$ Դ = Ա $\widehat{1/2}$ Բ $\widehat{1}$ Գ $\widehat{1}$ Դ, որ հաւասար է եօթն ձայնից բաղկացած մի երգի, ուստի գործիքն էլ եօթնալար էր կոչուում, Այս եօթնական ութնական վերածելու